


ԻՆՉՊԻՍԻ ՍԵՐՄ ՑԱՆԵՍ, ԱՅՆ ԷԼ ԿՍՏԱՆԱՍ



Կայք էջ՝ 1u1.am



ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ ԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԹԵՐԹ 27 ՄԱՐՏԻ 2022թ. թիվ 3 (32)

ԱՋԳԻՆ ՈՉԵՉԱՑՆԵԼՈՒ ՂԱՄԱՐ ԱՑՈՄԱՑԻՆ ՈՒՒՄԸ ՊԵՏՔ ՉԷ, ՈՉ ԷԼ ԱՅԼ ՈՒՐԻՇ ԶԵՆՔԵՐ, ՊԵՏՔ Է ՈՒՆԵՆԱԼ ՎԱՏ ԿՐԹԱԿԱՆ ՂԱՄԱԿԱՐԳ ԵՎ ԱՑԳ ՂԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԿՈՌՈՒՊՑԻՈՆ՝ ԽՆԱՄԻ, ԲԱՐԵԿԱՍ, ՂԱՐԵՎԱՆ ԿԱՊԵՐԸ:
ՇԵՆՔԵՐԸ ՓԼՎՈՒՄ ԵՆ ՎԱՏ ԻՆՏԵՆՏԻ ՊԱՏՃԱՌՈՎ:
ՂԻՎԱՆԳԸ ՄԵՌՆՈՒՄ Է ՎԱՏ ԲԺՇԿԻ ՉԵՌՔՈՎ:
ՓՈՂԵՐԸ ԿՈՐՑՆՈՒՄ ԵՆ ՎԱՏ ՂԱՇՎԱՊԱՂԻ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԵՏԻ ՊԱՏՃԱՌՈՎ:
ԱՐԳԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՆՂԵՑԱՆՈՒՄ Է ՎԱՏ ԿՐԹԱԿԱՆ ՂԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՍՈՎՈՐԱԾ ՈՒ ԳԱՍՏԻԱՐԱԿՎԱԾ ՈՍՏԻԿԱՆԻ, ԳԱՏԱՎՈՐԻ ԵՎ ՓԱՍՏԱԲԱՆԻ ՊԱՏՃԱՌՈՎ:
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ ԱՋԳԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄՆ Է:

ՆԵՆՍՈՆ ՄԱՆԳԵԼԱ

Գեղարքունիք գյուղի միջնակարգ դպրոցի «1+1» մարզային դպրոցական թերթը հյուրընկալվել էր Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայում: Հաստատության հիմնադիր ռեկտոր, փ/ծ գեներալ-մայոր Համլետ Մաթևոսյանը ծանոթացրեց ուսումնական հաստատության գործունեությանը, ինչն ուղղված է բարձրորակ կրթության ապահովմանը, քաղաքացիական պաշտպանության ոլորտում գիտահետազոտական աշխատանքների իրականացմանը, բնակչության ներգրավմանն ու ծառայությունների զարգացմանը, որակյալ կադրային ներուժի կատարելագործմանն ու որակյալ ենթակառուցվածքների ստեղծմանն ու բարելավմանը, բարձրորակ ծառայությունների տրամադրմանը, արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության գործընթացների կառավարման ուղղությամբ նորարարական գործընթացների խթանմանը, կառույցների ու կազմակերպությունների հետ համատեղ բնակչության պաշտպանության կառավարման միասնական համակարգի ստեղծմանն ու մասնագետներին պատակաստանը, բնակչության լայն շերտերի համար լրացուցիչ կրթության ծրագրերի մշակմանն ու իրականացմանը: Այցելեցինք գրադարձակապես պարտապարտաբար իր համար նախատեսված տեխնիկապես հագեցած լաբորատորիա:

ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՈՔ ՊԵՏՔ Է ՍԻՐԻ ԻՐ ԸՆՏՐԱԾ ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ...



ձեռք բերմանը և դժվարությունների հաղթահարմանը: Եթե մարդը չունի ստեղծագործական մոտեցում, ապա իր անհաջողությունների կամ ստեղծված խնդիրների մեջ փորձում է գտնել մեղավորներ կամ ինչ-որ անհամապատասխանություններ է փնտրում: Ամենամեծ զենքը մարդու համար այն է, երբ նա սիրում է աշխատանքը, այս դեպքում երեխաներին: Մեր գլխավոր մշակույթը մեր մտածողությունն է, որը պետք է փոխել:

Պարզանյութ բնագավառ լավ մասնագետի կարիքն ունի: Ակադեմիայի գործունեությունն ուղղված է հենց այդ մշակույթի զարգացմանն ու անվտանգության միջավայրի ձևավորմանը: Դպրոցականներն առաջին հերթին պետք է լինեն բարի, որը մեր մասնագիտության գլխավոր խնդիրն է, բարի լինել չի նշանակում լինել խեղճ, այն առավելագույնն է մարդու կյանքում, սերը շրջապատի և բնության նկատմամբ, որը պետք է ցուցադրել արարքների միջոցով: Յուրաքանչյուրը պետք է սիրի իր երկիրը, լեռան լանջը, որի հետ նա աշխատում է, այն հարստություն է, այն գեղեցիկ է, նրա հետ պետք է բարի վերաբերվել, որ հետագայում աղետների առաջ չկանգնենք: Բնության հետ վատ վերաբերվելով, որը մարդու չմտածված գործունեության արդյունք է, հետագայում պատասխան է տալիս: Մեր նպատակն է անվտանգության մշակույթի ձևավորումը սկսել նախադպրոցական հաստատություններից, այնուհետև դպրոցական ծրագրերում տարբեր առարկաների մեջ ինտեգրել թեմաներ մեր մասնագիտության ուղղություններով: Օրինակ մեր թեմաներով կազմվել են խնդիրներ մաթեմատիկա, ֆիզիկա, քիմիա առարկաների համար, ինչը աշակերտի մոտ կառաջացնի ստեղծագործական, մտավոր զարգացման, երևակայության և այլ կարողություններ: Մենք շատ սովորելու և զարգանալու պահանջ ունենք, յուրաքանչյուր ոլորտ պետք է տեսական գիտելիքները համեմատի այլ երկրների հետ, որպեսզի կարողանա գտնել թերազումներն ու բացթողումները: Չպետք է բավարարվել կարողացածով կամ ստեղծածով, մշտապես պետք է մտածել կատարելագործվելու և առաջ գնալու մասին: Մենք պարտավոր ենք երեխաներին զարգացնել ոչ միայն գիտական, այլ նաև մշակույթային ուղղություններով, պատասխանեց ակադեմիայի ռեկտորը:

Ակադեմիայում կրթության համակարգն ունի ուղղահայաց զարգացում, այսինքն իրականացվում են միջին մասնագիտական, բակալավրի, մագիստրոսի և հետազոտողի կրթական ծրագրեր: Ռեկտոր Մաթևոսյանը նշեց, որ արտակարգ իրավիճակների նախարարության առաքելությունը բնակչության պաշտպանությունն է արհավիրքներից, ինչն իր էությունը բարի գործ է և սահմանված է օրենքով: Պարոն Մաթևոսյանն ասաց, որ ցանկացած իրավիճակում խուճապը մարդկանց մոտ առաջանում է մշակույթի, այլ ոչ թե տեղեկատվության պակասից: Տեղեկացվածությունը դեռևս մշակույթ է: Որպեսզի բնակչությունն ունենա մշակույթ, անհրաժեշտ է ձևավորել անվտանգ միջավայր, որը շատ բարդ խնդիր է: Նա հավելեց նաև անվտանգության մշակույթի ձևավորմանն ու մտածողության փոփոխության կարևորության մասին: Յուրաքանչյուր քաղաքացի պետք է գիտակցի անվտանգության մշակույթի կարևորությունը, ունենա գիտելիքների, հմտությունների ու կարողությունների մակարդակ, տիրապետի վարքականոցների, որոնք կնպաստեն անվտանգ միջավայրի ձևավորմանը: Օրինակ՝ ինչպես կարող է մարդն ակամատես լինել երկրաշարժի հետևանքով առաջացած աղետալի հետևանքներին և շարունակել մտածել նույն ձևով...

Սպիտակի երկրաշարժի ժամանակ փրկարար հասկացությունը չկար, պետական փրկարարական ուժերը ձևավորվեցին այդ երկրաշարժից տարիներ անց: Ինչ վերաբերում է տեխնիկական հագեցվածությանը, ապա այն միշտ էլ կունենա զարգացման կարիք, ինչը կապված է գիտության և տեխնիկայի զարգացման անընդհատության հետ: Ինչպե՞ս պետք է ճիշտ ընտրեն մասնագիտություն, որ կարողանա դառնալ հասարակությանը պիտանի մարդ,-հարցնում ենք:

Ակադեմիան շարունակում է համագործակցությունն օտարերկրյա առաջատար բուհերի, գիտական կենտրոնների և միջազգային կազմակերպությունների հետ, այդ թվում՝ ճապոնի, Հարավային Կորեա, Շվեդիա, Գերմանիա, Իտալիա, Լեհաստան, Ֆրանսիա և այլն: Ակադեմիան իր գործունեության ընթացքում ձեռք է բերել հարուստ գրադարան, մի շարք գրքերի և աշխատությունների հեղինակը հենց ինքը՝ գեներալ-մայոր Մաթևոսյանն է: Ակադեմիան իր ուժերով ստեղծել է գերհագեցած ինովացիոն տեխնոլոգիաների համալիր (ITC) լաբորատորիա, որտեղ ուսանողները գտնում են հետազոտ կառավարվող սարքավորումների կիրառման ձևերը, որոնք օգնում են փրկարարներին իրենց աշխատանքն ավելի արդյունավետ դարձնելու:

Մարդը պետք է ծանաչի այն տարածքը, որտեղ ինքն ապրում է, իմանա վտանգների մասին, ապրի դրանց հետ հաշտ և իմանա դրանց կանխման ու կանխարգելման ուղիները: Պետք է փոխենք մեր մտածելակերպը՝ այն համապատասխանեցնելով ժամանակակից պայմաններին: Յուրաքանչյուր խնդիր ունի իր լուծումը, չկա և չպետք է առաջնորդվել եզրույթներով, պետք է առաջ շարժվել՝ գտնելով ամենաօգտակարը: Մենք միշտ փորձում ենք ստանալ այն ամենը, ինչը որ պատրաստ է, չենք ձգտում նորարարությունների

Պետք է յուրաքանչյուրը սիրի իր ընտրած մասնագիտությունը, բարությանը լցվի նրա նկատմամբ, որ կարողանա հետագայում իր ստացածը ճիշտ մատուցել, այսինքն՝ մասնագիտորեն: Հարկավոր է մտածողություն դաստիարակել երեխայի մեջ և ճիշտ միջավայր ստեղծել, ինչը մեզանից երկար ժամանակ կպահանջի: Անվտանգ միջավայրի ձևավորման հարցում շատ կարևոր է ինչպես ծնողի, այնպես էլ միջավայրի դերը՝ ընտանիք, դպրոց, փողոց, բակ և այլն: Օրինակ, եթե երեխան մեծանում է ընտանիքում, որտեղ հայրը ծխում է, հաճախակի դիտողությունները երեխային չեն օգնի չձխելու, քանի որ երեխայի համար լավագույն օրինակը հայրն է: Այսինքն, եթե ուզում ենք լավ արդյունք ունենալ, պետք է աշխատենք մեր մտածողության վրա: Քաղաքացիական պաշտպանությունն իրականացվում է ռազմական պայմաններում, թաքստոցներ, նկուղներ և այլն, որոնք նախապատրաստվում են խաղաղ պայմաններում, իսկ գործառույթն իրականացնում են տվյալ տարածքի համապատասխան մարմինները: Գիտելիքներ կարելի է ստանալ գրքերից, էլեկտրոնային հարթակներից, շատ պետք է կարդալ, պրպտել, գտնել, սակայն անհրաժեշտ է մասնագետի հսկողությունը և օգնությունը: Մենք ունենք անվտանգության ցածր մշակույթ. յու-



«1+1» թերթի խմբագրություն

ԼՍԵԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ



Մարդու ամենամեծ արժանիքներից մեկը լսել կարողանալն է: Կարող է չհավատաք, բայց մեծամասնությունը ավելի շատ խոսում է, քան լսում: Դուք ձեր ծանոթներից ոմանց համա-


րում է՞ք վատ լսող: Ինչպի՞սի զգացմունք ունեք դուք այդ մարդու նկատմամբ: Պրակտիկորեն ոչ մեկը չի կարող ձեզ հանդգնել, որ դա լավ է, քանի որ դուք նյարդայանաում եք, երբ ձեզ չեն կարողանում լսել: Հաջողակ հարաբերությունը սկսվում է այն բանից, որ մարդիկ կարողանում են իրար լսել: Կարողանալ լսել՝ չի նշանակում ուղղակի չխոսել: Ընտանեկան պրոբլեմները ծագում են հիմնականում նրանից, որ ամուսինները չեն կարողանում իրար լսել: Ցանկացած հանգամանքում պետք է կարողանալ լսել, այն կօգնի հասկանալու դիմացինի մտքերը, զգացմունքները ու ասածները: Մարդը, որպես կանոն, չի գիտակցում իր խնդիրները, որի պատճառով կարող է զրկվել ընկերներից, աշխատանքից և գործընկերներից: Իրոք, մարդկանց մեծամասնությունը ավելի շատ խոսում է, քան լսում: Ցավոք, մեզ դպրոցում երբեք չեն բացատրել ինչ-քան կարևոր է լսել և հասկանալ դիմա-

ցին: Ամերիկայի մի մեծ ձեռնարկություն որոշեց աշխատակիցներին հորդորել մասնակցել դասընթացի, որից հետո նրանք խոստովանեցին, որ դասընթացը օգնեց իրենց ոչ միայն հասնել հաջողության աշխատանքում, այլ նաև ընտանեկան հարաբերություններում: Ծնողները ասում են, որ երեխաները իրենց հեշտ չեն լսում, իսկ երեխաներին ծնողները չեն կարողանում հասկանալ: Լսելու ունակությունը բարձրացնում է մարդու ինքնասիրությունը: Որպեսզի կարողանան լսել ծնողներին, ուսուցիչներին, ընկերներին, գոյություն ունեն մի շարք գիտական մեթոդներ, բայց ամեն պարզունակը, որը պարտադիր պետք է իմանա յուրաքանչյուր դպրոցական: Եթե ձեզ հետ խոսում է ձեր ծնողը, և դուք լավ գիտեք, թե ինչի մասին է խոսում, լսեք այնքան, ինչքան հնարավոր է, բայց երբ զգում եք, որ անհնար է լսել, քանի որ այդ արդեն մի քանի անգամ ասվել է, մտովի հաշվեք մինչև 20-

ը և ցածր ծայրով ասեք, թե կարող եմ գնալ դաս սովորելու կամ ինչ-որ կարևոր գործ անելու: Կզգաք, որ 60-70 տոկոսով կլիցքաթափեք մթնոլորտը: Դուք պետք է հարգանքով վերաբերվեք ձեր ուսուցիչներին, քանի որ դուք լավ տեսնում եք, թե ինչ ջանք են քափում ձեր ծնողները ընտանիքում լավ ստեղծելու համար, որտեղ երկու կամ երեք երեխա կա, իսկ պատկերացրեք 20-30 երեխան և մեկ ուսուցիչ, դա շատ դժվար աշխատանք է, որպեսզի կազմակերպի դասարանում լավ մթնոլորտ: Փորձեք խոսել միմյանց հետ և հաշվեք մինչև 20-ը, եթե նկատում եք, որ նա իր խոսքը չի ավարտել և միտքը շարունակվում է, հնարավորություն տվեք խոսակցին ավարտելու իր մտքերը, և դուք կունենաք լավ հարաբերություններ տանը, դպրոցում և առօրյայում:

**Մանուշակ Թովմասյան
Հոգեբան-խորհրդատու**

ՄԵԿ ՕՐ ՀՆԻԿԱՍՏԱՆՈՒՄ



Ես էլեմն եմ, հետաքրքրասեր մի աղջիկ, ով դեռ մանկուց ունեցել է բազմապիսի երազանքներ, որոնցից մեկն էր՝ կյանքի գոնե մեկ օրը անցկացնել ՅՆՊԿաստանում: Իմ երազանքը իրականացելու համար ես նախապես ծանոթացա ՅՆՊԿաստանի աշխարհագրական և քաղաքական դիրքին, պատմությանը և մշակույթին:

Եվ մի օր հետաքրքրությունից դրդված՝ ես որոշեցի գրի առնել այն ամենը, ինչը որ կանեն ՅՆՊԿաստան մեկնելուն պես: Իմ ճանապարհորդությունը, ցավոք, շատ կարճ է տևելու՝ ընդամենը 1օր: Իմ օրը շատ պայծառ ու արևոտ սկսվեց: Սկզբում ես զանազի Դելի՝ ՅՆՊԿաստանի մայրաքաղաք, քանի որ շատ եմ կարգացել մայրաքաղաքի ճարտարապետական հուշարձանների, առեղծվածային ավանդույթների, հյուրընկալ ընտանիքների և համեղ ճաշատեսակների մասին:

Տեղավորվելով հյուրանոցում՝ ես համտեսեցի հնդիկ ժողովրդի կողմից շատ սիրված ապուր և պատրաստվեցի այցելել երկրի տեսարժան վայրեր՝ հիանալու ՅՆՊԿաստանի աննկարագրելի գեղեցկությամբ: ՅՆՊԿաստանը կոչվում է ամենավառ գույների և ամենավառ համեմունքների երկիր: Դեռ վաղ տարիքում ծանոթանալով ՅՆՊԿաստանի պատմությանը՝ ես օրեցօր նոր բացահայտումներ էի կատարում ՅՆՊԿաստանի մասին:

Իսկ գիտե՞ք, որ ՅՆՊԿաստանի տարածքում կա մի հետաքրքիր ճարտարապետական հուշարձան՝ սպիտակ մարմարե պալատ, որը դամբարան-մզկիթ է: Շենքի բառակուսի ճակատը պարունակում է կիսաշրջանաձև խորշեր: Դրա պատճառով կառուցվածքը, որպես ամբողջություն, բավականին կոկիկ տեսք ունի՝ չնայած իր ողջ զանգվածայնությանը: Ամենազարմանալիս այն է, որ պալատը կարողանում է գույնը փոխել: Ամօրնուտ եղանակին թվում է կիսաթափանցիկ, առավելային՝ վարդագույն, իսկ երեկոյան՝ ոսկեգույն: Ներսում պատերը զարդարված են ներկված սալիկներով, ամենուր կիսաթանկարժեք և քանկարժեք քարեր են:

Արդեն երեկո էր, ես ուղևորվեցի նորից Դելի: Երկար շրջելով քաղաքում՝ հասկացա, որ Դելին երեկոյան ավելի գեղեցիկ է բազմազան լույսերի ներքո: Այստեղ ես այցելեցի նաև աշխարհի ամենաբարձր միմարտեթը՝ Քաթուր Սիմարը, Մոնոլիթայի դամբարանը՝ Համայունի դամբարանը, բազմաթիվ զարմանալի տաճարներ, ինչպես նաև թանգարաններ՝ Ազգային թանգարան, Գանդի Սմիթիի թանգարան, Ինդիա Գանդիի թանգարան, արհեստների թանգարան: Այսպես թե այնպես, բայց երկրով մեկ ճանապարհորդությունների մեծ մասը սկսվում է այստեղից, ուստի օգտակար և նույնիսկ անհրաժեշտ է իմանալ մայրաքաղաքի հարստությունների ու գեղեցկությունների մասին:

Եվ այսպես, ավարտվում է իմ 24 ժամը, և ես նորից պետք է վերադառնամ հայրենիք: Վերադառնալուն պես ես պատմեցի այն ամենը, ինչ որ տեղի է ունեցել ինձ հետ, թե ուր եմ գնացել ու ինչ եմ տեսել: Իմ ունեցած տպավորություններով ու կարիքներով կկիսվեմ ընկերներին ու հարազատներին հետ:

Եվ չնայած իմ տպավորություններին ու կարծիքներին՝ ես միշտ հետևում եմ մեր հայ մեծերի այսպես ասած կարգախոսին՝ «Այս կյանքում որ երկրում էլ լինես, որ քաղաքում, որ վայրում էլ լինես, քեզ կզգաս այնքան օտար, որքան հարազատ քո իսկ հայրենիքում»:

**Ավագյան Էլեն
Սևանի N 4 հիմնական դպրոցի
8-րդ և դասարանի աշակերտուհի**

ԻՄ ԳՅՈՒՂԻՑ ՀՈՈՄ ՄԵԿ ԲԱՅԼ Է

Եվրոպայում ապրելը և սովորելը անհասնելի երազանք չէ, անգամ եթե դուք ապրում եք Հայաստանի ամենափոքրիկ գյուղերից մեկում: Հարկավոր է իմանալ՝ ո՞ր ճանապարհով գնալ և ինչու: Ոչ ոք և ոչինչ չի կարող սահմանափակել կամ կանգնեցնել ձեզ, եթե ձեր արժեքները վե՛ են, իսկ նպատակները հաստատուն: Ծնվել և ապրում եմ Լճափ գյուղում, սովորում Գավառի պետական համալսարանում: Համալսարանի միջազգային ուսանողական փոխանակման ծրագրերի շնորհիվ ուսանել եմ Հռոմի Սապիենցա համալսարանում, որը, ըստ վարկանիշի, 2-րդն է Իտալիայում և ամենամեծ բուհերից մեկն է ամբողջ Եվրոպայում: Արտերկրում ապրելը և սովորելը անփոխարինելի փորձ է, որը օգնում է դառնալ ավելի ինքնուրույն և ինքնավստահ:

Իտալիայի կրթական համակարգը խիստ տարբերվում է Հայաստանի կրթական համակարգից: Դասերը անցկացվում են երկրի լավագույն մասնագետների կողմից, սակայն ուսանողը չի դիտարկվում որպես անհատ, ինչպես Հայաստանում: Դասերին մասնակցելը պարտադիր պայման չէ և առարկան յուրացնելու ամբողջ պատասխանատվություն ուսանողների ուսերին է, գլխավոր խնդիրը քննաշրջանի հաջող հանձնումն է:

Սապիենցա համալսարանը ամբողջապես հագեցած է նորագույն տեխնոլոգիաներով, լաբորատորիաներով, թանգարաններով,

որոնք կարևոր նախապայման են որակյալ կրթություն ստանալու ճանապարհին: Համալսարանի տասնյակ մասնաշենքերը ունեն հագեցած գրադարաններ և լսարաններ, որտեղ աշխատելու կամ դասերին մասնակցելու համար անհրաժեշտ է նախնական ամրագրում: Հաջորդաբար ամրագրելու և չնհրայանալու դեպքում կարող եք զրկվել գրադարան մուտքի թույլտվությունից: Համավարակի և ուսանողների մեծ հոսքի պատճառով աշխատաժամանակը սահմանափակված է և հատուկ ընթացակարգ պետք է անցնել ամեն ինչի հասանելիություն ստանալու համար: Լինելով այդ համալսարանի ուսանողը՝ կունենաք անվճար մուտքի թույլտվություն Հռոմի լավագույն թանգարաններ, պատմամշակութային հուշարձաններ և հասանելիություն լավագույն հետազոտական բազաներին:

Միջազգային բուհում սովորելը մեզ կթողնի էլ համաշխարհային մշակույթի, արժեքների, աշխատելաճի մասին, ինչը բարդ կլինի իմանալ ապրելով միայն Հայաստանում: Բուհում, թե բուհից դուրս միշտ կան սովորելու և զարգանալու առիթներ, պետք է միայն բաց լինել՝ դրանք նկատելու համար:



Եթե այժմ դուք ապրում եք փոքր գյուղում կամ երկրում, կամ սովորում փոքր համալսարանում, մի՞ դիտարկեք դրանք որպես թույլ կողմեր, իրականում դրանք մեր առավելություններն են, որ մեզ տանում են ավելի մեծ բարձունքների:

**Մարիամ Խաչատրյան
Գավառի պետական
համալսարանի
Անգլերեն լեզու և
գրականություն բաժնի
Մագիստրատուրայի 2-րդ
կուրսի ուսանողուհի**

ՀԱՅԱՍՏԱՆԵՆ ՕՏԱՐՆԵՐԻ ԱԶԳԵՐՈՎ



Հայաստանում օտարների աչքերով թվում է, թե հասարակ երկիր է, բայց դա սխալ է: Պետք է դու ապրես Հայաստանում, զգաս նրա շունչը, ապրես նրա բարիքներով, խնամես և հոգ տանես նրա մասին, այդ ժամանակ էլ կզգաս Հայաստանի քաղցրությունը: Եթե Հայաստանում ապրես, կհիմնաս նաև քո երկրի և Հայաստանում կատարված ամեն մի իրադարձության մասին: Հայաստանը նման է քո ծնողներին. ինչքան սիրում ես քո ծնողներին, այդքան էլ սիրում ես Հայաստանը: Հայաստանը քեզ ուժ է տալիս, որ դու հաղթես ամեն մի դժվարություն: Դրա համար էլ պետք է Հայաստանի մասին իմանա ամբողջ աշխարհը, և եթե իմանում ես Հայաստանի մասին, կհիմնաս նաև Հայաստանի ամեն մի գաղտնիքը: Իսկ որպեսզի օտարը սիրի և իմանա Հայաստանի մասին, մենք էլ պետք է լիարժեք իմանանք նրանց երկրի մասին: Ամեն մեկը պետք է սիրի իր երկիրը և հոգ տանի իր երկրի մասին: **Սյուզաննա Մանուկյան
Լճավանի Ա. Խաչատրյանի անվան
միջնակարգ դպրոց, 6-րդ դասարան**

ԵՐԻՑՈՒԿ



Երիցուկը ծաղիկ է, որը հասարակ է, բայց բավականին յուրահատուկ: Իսկ դու գիտե՞ս, որ այդ հասարակ ծաղիկը կարող է մարդկանց սրտերը լցնել ուրախությամբ: Հասարակ... ախ այդ հասարակը, մի՞թե չէր լինի չգործածել այդ բառը: Նկարը, որտեղ կա երիցուկ, դարձնում է այն նուրբ և էսթետիկ: Այդ յուրօրինակ ծաղիկը այնքան է գրավել ինձ, որ ես կցանկանայի ամբողջ աշխարհը զարդարել երիցուկով: Չարդարել երկինքը, որ ամեն անձրևի հետ երիցուկի թերթեր թափվեին երկնքից, կուզեի ամեն բացվող արևի շողերի փոխարեն երիցուկներ լինեին, մարդկանց սրտերն էլ լինեին երիցուկի պես նուրբ և քնքուր: Բայց այդ վարդերը, որոնք իրենց վրա սևեռում են մարդկանց համարակնքը, շատ դեպքերում խանգարում են՝ զգալու երիցուկի նրբությունը... Ախ այդ վարդերը:

**Տիրուհի Խաչատրյան
Գեղարքունիքի միջնակարգ դպրոց**

2

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ-125



«Ես եկել եմ դարերից ու գնում եմ հաղթական...»

Նա մարդ էր, պոետ և քաղաքացի 2022թ. մարտի 14-ին Լճաշեն գյուղի Ա.Տեր-Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոցում տեղի ունեցավ գրական-երաժշտական ցերեկույթ՝ նվիրված հայ գրականության զագաթներից մեկի՝ արևապաշտ բանաստեղծ Եղիշե Չարենցի ծննդյան 125-ամյա հոբելյանին:

Դպրոցում ամենուր Չարենցյան էր, չարենցյան խորհմաստ պատգամ՝ «Ո՛վ հայ ժողովուրդ, քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է»:

Դասասենյակում Եղիշե Չարենցի մեծադիր նկարն էր, Չարենցի ու մեծերի խոսքերը, նկարներ, գրքեր, վահանակներ, ծաղիկներ...

Ցերեկույթն սկսվեց «Ես իմ անուշ Հայաստանի» երգի հոգեթով երաժշտությամբ ու պարով:

VI-XI դասարանների աշակերտներն իրենց գեղեցիկ խոսքով ներկայացրին մեծ պոետի կյանքի անմոռաց, հետաքրքիր էջերը, նրա խոսքերը, բանաստեղծություններն ու պոեմները:

Հնչեցին Չարենցի խոսքերով գրված երգերը՝ «Լուսամիտի պես աղջիկ», «Հեռացումի խոսքեր», «Հայրենիքում»:

Չարենցը սովորական անձ չէր, ինչպես իրավացիորեն ասել է Մարտիրոս Սարյանը. «Նաիրին ծնեց Չարենցին... ժայռակոփ պատկերներ և սեպագրեր տեսավ, ծաղկագարդ մագաղաթներ և ձուլածո տաճարներ, բայց ծով արյան ու ծով ցավերի մեջ... բարձրացրեց գլուխը, տեսավ շողացող արևը... Եվ իր հայրենիքի արցունքները սրբելու համար մխրձվեց փոթորիկների մեջ ու ելքեր որոնեց...»:

Աշակերտները ներկայացրին, որ Չարենց-Բանաստեղծն ու Չարենց-Մարդը դարձել են հավերժության ուղեկից:

Եղիշե Չարենցը եկել է դարերից ու հաղթականորեն գնում է դեպի ապագա...

Ես եմ հիմա- մի պոետ, և իմ անունը Չարենց-Պիտի վառվի դարերում, պիտի լինի բարձր ու մեծ: Ցերեկույթը կազմակերպել էր հայոց լեզվի, գրականության և գրաբարի առարկայական մեթոդական միավորումը, այն մեծարանքի արտահայտություն էր նորագույն շրջանի հայ պոեզիայի առաջնորդի, ազգային հանճարի հանդես:

Աշակերտներին, կազմակերպիչներին շնորհավորեց տնօրեն Արիս Մուրադյանը՝ ավելացնելով, որ մարտիրոսանավու սխրանքով Չարենցը հավիտենապես հայ ժողովրդի հետ է, նրա լուսավոր ձգտումների հետ:

Չարենցի պոեմներում հառնում է Նաիրյան երկիրը, որը, ձուլվելով հեղափոխությանը, հեղափոխության բրոնզե թևերով ձգտում է դեպի մարդկության գալիք լուսավոր հեռուներ:

Ողջույն — ավելի՛ առնական, արի, Զան ողջույնը քո, երկիր արնաքամ, Կարմիր Նաիրի...

Բանաստեղծը հավատում էր՝ առաջին անգամ իր սրտում են վառ խտացել ու մարմին առել Նաիրի երկրի գալիքները:

Ձեռնա Դանիելյան
գ. Լճաշեն, հայոց լեզվի, գրականության և գրաբարի առարկայական մեթոդական միավորման նախագահ

ՀՈՎՀԱՆՆԵԱ ԹՈՒՄԱՆՅԱՆ =153



2022 թվականի փետրվարի 19-ին Գեղարքունիքի մարզի Ավազան գյուղի հիմնական դպրոցում մեծ շուքով նշեցին ամենայն հայոց բանաստեղծի՝ Հովհաննես Թումանյանի ծննդյան 153-ամյակը:

Աշակերտները մեծ խանդավառությամբ ներկայացրեցին բանաստեղծի կյանքի դրվագները, ստեղծագործությունը, արտասանեցին, երգեցին, պարեցին:

Սահիկաշարի միջոցով ներկայացրեցին լրացուցիչ նյութեր մեծ բանաստեղծի կյանքի մասին:

Միջոցառման կազմակերպիչ, հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Մ. Սարգսյանը, չխախտելով օրվա ավանդույթը, գիրք նվիրեց լավագույն ասունքողներին:

Օրը հագեցած էր Թումանյանի շնչով, հին ու խարխուլ պատերի ներսում մեր սերունդն արժևորեց բանաստեղծի թողած ժառանգությունը, կարևորեց գրքի ու ընթերցանությունը դերը մեր կյանքում:

ՄԱՆՐ ՄՈՏՈՐԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ ԵՐԵՒԱՅԻ ՄՈՏ



Վոր է նույնիսկ, որ երեխայի խոսելու կարողությունը համապատասխանի բնականոն խոսքի զարգացմանը, սակայնդադեռ չհնչանալուն, որ նա կարող է լիարժեք դեկավարել իր ձեռքերի շարժումները: Եթե 4-5 տարեկանում քուլակապումը երեխայի մոտ առաջացնում է դժվարություններ, իսկ պլաստիլինով, բացի գնդերից և ձողիկներից, ուրիշ ոչինչ չի կարողանում ձեփել, եթե 6 տարեկանում կոճակ կարելը վտանգավոր ու անկարելի խնդիր է, ուրեմն նման երեխան ունի մոտորիկայի զարգացման կարիք:

Մանր մոտորիկայի զարգացումն անմիջական բարենպաստ ազդեցություն է թողնում նաև խոսքի ձևավորման վրա: Որպեսզի մանկիկը սովորի խոսել, անհրաժեշտ է ոչ միայն վարժեցնել նրա հնչարտաբերական ապարատը, այլև զարգացնել ձեռքերի մանր մոտորիկայ: Նորածնին խնամելիս մայրիկը խաղում է նրա մատների հետ, մերսում դրանք: Սրանով նա նպաստում է երեխայի մանր մոտորիկայի զարգացմանը: Սակայն այդ աշխատանքները պետք է լինեն ոչ թե տարերային, այլ համակարգված, շարունակական և նպատակաուղղված: Մերսելով դաստակը, հատկապես մատների ծայրամասային հատվածը խթանում ենք երեխայի ուղեղի «շարժման» կենտրոնի զարգացմանը՝ ակտիվացնելով նաև հարևան կենտրոնների աշխատանքը: Մարդու գլխուղեղում խոսքի և ձեռքի մատների շարժումները կոորդինացնող կենտրոնները գտնվում են հարևանությամբ: Բոլոր շարժումները դեկավարող կենտրոնի 1/3-ը զբաղեցնում է ձեռքի մատների շարժումների կենտրոնը: Գիտության կողմից հաստատված այս փաստը թույլ է տալիս ձեռքի դաստակը դիտարկել որպես «խոսքի օրգան», որի մարզումն ու վարժեցումը նույնքան կարևոր դեր է խաղում երեխայի խոսքի զարգացման գործընթացում, որքան հնչարտաբերական ապարատը: Վաղ մանկական տարիքում երեխան դրսևորում է վերջույթների և մատների շարժումների կառավարման հմտություններ՝

- Կառուցում է պարզ շինություններ՝ ուղղահայաց, հորիզոնական դիրքերով:
- Ձեռքի և դաստակի կոորդինացված շարժումներով գծում, նկարում է՝ օգտագործելով թղթի ամբողջ մակերեսը:
- Ինքնուրույն հագնվում և հանում է հագուստի որոշ մասեր:

Երեխան ցուցաբերում է վերջույթների կառավարման հմտություն՝ աջ կամ ձախ վերջույթի գերակայությամբ:

• Գործողություն կատարելիս նախընտրում է աջ կամ ձախ վերջույթը:

Պետք է կիրառել տարբեր միջոցներ՝ երեխայի ձեռքը գրելուն նախապատրաստելու համար:

Հայտնի է, որ երեխայի ձեռքերի մատների շարժումներն ուղղակիորեն կապ ունեն խոսքի կարգավորման հետ: Մանր մոտորիկայի ձեռքերի և ոտքերի մատներով, դաստակներով ու սրունքներով նուրբ ու ճշգրիտ շարժումները կառավարող նյարդային, մկանային և ոսկրային համակարգերի համակցված գործողությունների հանրագումար է, ինչը հաճախ զուգակցվում է տեսողական համակարգի գործունեության հետ: Մանր մոտորիկայի ներառում է բազմազան շարժումներ սկսած պարզունակ ժեստերից (առարկա բռնելը) մինչև բարդ ու նուրբ գործողությունները, որոնց համակցմամբ պայմանավորված է նաև երեխայի ձեռագիրը:

Երեխայի մանր մոտորիկայի զարգացումն այսօր արդիական խնդիր է: Այդ հարցի կարգավորմանն ուղղված աշխատանքները վերաբերում են ծնողներին, մանկավարժներին, հոգեբաններին, ինչպես նաև երեխայի խնամքով զբաղվող այլ մասնագետներին: Ներկայումս երեխայի մոտորիկայի զարգացման ոլորտում հարկ է առանձնացնել հոգեբանամանկավարժների՝ Լիանա Վերդյանի, Անահիտ Վարդանյանի, Վ. Գրիգորյանի, Հ. Հարությունյանի աշխատությունները:

Ընդհանուր մոտորիկայի և մասնավորապես ձեռքերի շարժողականության թույլ զարգացման հետևանքով երեխաները դպրոցի շեմին ունենում են խոսքի զարգացման խնդիրներ կամ պատրաստ չեն լինում գրելու տեխնիկայի յուրացմանը:

Ժամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիական տարրերի զարգացմանը զուգընթաց հետընթաց է ապրել մանր մոտորիկայի զարգացումը: Հնարա-

Նախադպրոցական տարիքում երեխան ցուցաբերում է ձեռքի և մատների շարժումների կառավարման հմտություններ՝

- Կատարում գործողություններ փոքր (մանր) առարկաներով:
- Կառուցում է միջին բարդության շինություններ:
- Ծեփում է պարզ կլոր, տափակ, պարանաձև առարկաներ:
- Երեխան դրսևորում է նկարելու հմտություններ՝
- Բռնում է մատիտը ձեռքի առաջին 3 մատներով՝ թուրք մյուս ձեռքով պահելով:
- Բռնում է մատիտը ծայրին մոտ:
- Արտանկարում է երկրաչափական պատկերներ:
- Նկարում է մարդ, որն ունի գլուխ և մեկ գծով պատկերված վերջույթներ:
- Կրկնագծում է (եզրակ է քաշում) նկարի ուրվագծով:

Երեխան ցուցաբերում է մկրատով կտրտելու պարզ հմտություններ՝

- Մեկ ձեռքի մատներով բացում և փակում է բուք ծայրերով մկրատը:
- Երեխան կատարում է ինքնասպասարկմանն ուղղված առօրյա գործողություններ՝
- Արձակում և կոճկում է մեծ կոճակները, հագուստի մեծ շղթաները, քուղերը:
- Արձակում է կոշիկի քուղերը:
- Ինքնուրույն օգտվում է սպասքի որոշ տեսակներից:

Իսկ ահա կրտսեր դպրոցական տարիքի հիմնական նորագոյացություններից է գործողությունների կանաժիմունքային զարգացումը, որը բավական երկարատև գործընթաց է և սկսվում է ուսումնական գործունեության ընթացքում: Ձևավորվում է կամք, որը անընդհատ և շարունակական գործընթաց է, քանի որ ուսումնական գործունեության ողջ ընթացքում երեխայի առջև դրվում են նորանոր նպատակներ: Սկզբնական շրջանում կամքի ձևավորումը մեծապես պայմանավորված է արտաքին պայմաններով՝ պահանջներով, ցուցումներով, օրինակներով, սակայն զարգացման ընթացքում երեխան սկսում է առաջնորդվել սեփական պահանջներով, ցանկություններով, ձգտումներով: Կարևորագույն բնութագրերից է ինքնուրույնությունը: Այս տարիքի բնորոշ հատկանիշն այն է, որ երեխան խաղը փոխարինում է նոր գործունեությամբ՝ ուսմամբ:

Չուր չի ասել Սուխոմլինսկին. «Խաղը կայծ է, որ վառում է հետաքրքրասիրության կրակը»: Որքան շարժումները բազմազան են, այնքան ավելի մեծ ինֆորմացիա է հասնում նրա գլխուղեղ, այնքան ավելի ինտենսիվ է ընթանում նրա հոգեկան զարգացումը: Այսպիսով որքան զարգացած է մոտորիկայ, այնքան անձը ավելի ճկուն է հասարակական միջավայրում, և ավելի երաշխավորված է նրա կյանքի որակի ապահովումը:

Ալիտա Տեր-Պասապարյան
Դաստիարակչուհի, ուսուցչուհի

ԳՆԱ ԱՅՆՏԵՂ, ՈՐՏԵՂ ԳԺՎԱՐ Է

Այկիզը՝ նախորդ համարում/

...Վերջապես ես միացա ընտանիքիս. պատերազմը վերջացավ: Մի օր առավոտյան ինձ արթնացրեցին ինչ-որ ծայներ. չնայած պատերազմը արդեն վերջացել էր, բայց մենք, միևնույն է, վախենում էինք բարձր ծայներին: Ես բացեցի լուսամուտը, որը պատրաստված էր բրնձի թղթից: Իմ վախերը անհետացան, ես տեսայն, ինչը ինձ հուզեց: Այնտեղ իմ բարեկամները մարզվում էին հին մարտական արվեստով, դա ինձ շատ դուր եկավ: Առավոտյան մտախուղը շարժվում էր նրանց ոտքերի և ձեռքերի շարժումներից, իսկ մարմինները փայլվում էին առավոտվա արևի շողերից, դա շատ գեղեցիկ էր: Տեսածս իմ մեջ խորը զգացմունք արթնացրեց: Յոթ տարեկանում դա ինձ թվում էր ամենա-անհավանականը, ինձ տանջում էր այն միտքը, որ պետք է սովորեի այդպես մարզվել: Ես դիմեցի հորեղբայրներին, խնդրեցի, որ նրանք սովորեցնեն ինձ, բայց նրանք ծիծաղեցին և ավելացրին. «Դու պետք է սովորես ճաշ եփել, շոր լվանալ և պատրաստվել ամուսնանալու, մարտական արվեստը կնոջ բանը չէ: Տղաների համար ոչ մի արգելք չկար, իսկ ես աղջիկ եմ: Մեր գյուղում կանայք շատ էին աշխատում՝ առավոտից մինչև ուշ երեկո: Աղջիկները պետք է սովորեն, թե ինչպես ճիշտ կազմակերպեն տնային տնտեսությունը, լինեն լավ կին, ունենան շատ տղա երեխաներ. այսպիսին էր 50-ականների կորեական ընտանիքի առօրյան, որը ունի 5000 տարվա ավանդույթ»:

Շատ խնդրեցի հորեղբայրներին, բայց ոչինչ չսովորեցրին, սակայն ես նրանց չէի լսում և անընդհատ պնդում էի, վերջապես հորեղբայրներս մեկը դիմեց խորանակ քայլի:

Նա ծիծաղելով բոլորին ասաց, որ կսովորեցնի, մեկ է, մի քանի օրից կփոշմանի:

Ես մարզվում էի ամեն առավոտ, այո, շատ դժվար

էր, ես հազում էի տաբատ, որ մյուս երեխաները չտեսնեն իմ ոտքերի կապտակները, բայց ես չհանձնվեցի, և ավելի շատ նրանք գարնացան, երբ ես կարողացա հաղթահարել դժվարությունները և ունեցա արդյունք: Իմ ընտանիքը և հարևանները ինձ վրա հոգեբանորեն ճնշում էին գործադրում, երբեմն ընտանիքիս կողմից ենթարկվում էի նաև ֆիզիկական բռնության՝ ծեծում և փակում էին սենյակում, որ չգնամ մարզումների: Մայրս և տատս լացում էին և աղոթում. «Աստված, ինչու՞ դու մեզ այսպիսի անպիտան աղջիկ տվեցիր»:

Մի օր մայրս այնքան զայրացավ, որ վերցրեց մկրատը և կտրեց իմ մազերը այն բանի համար, որ ես ամոք զգամ տանից դուրս գալիս և չգնամ մարզումների: Ես մի պահ զայրացա, բայց հետո սկսեցի մտածել, որ մազերս ուշ թե շուտ կանձեն, բայց ոչ մեկը չի կարող ինձ զրկել իմ սիրած զբաղմունքով՝ զբաղվելուց: Կարող եմ ասել, որ իմ ընտանիքը ինձ ավելի հաստատակամ դարձրեց, և ես չէի նահանջելու:

Հաճախ, երբ ես պատմում եմ այս մասին, մարդիկ ինձ հարցնում են, թե չեմ նեղանում իմ ընտանիքից, որ ինձ հետ այդպես են վարվել: Ո՛չ, չեմ նեղանում, միշտ մտածել եմ, որ մայրս այդ ժամանակ արել է այն ամենը, ինչը որ ճիշտ է համարել, որը ինձ համար լավ կլիներ: Մտածում եմ այն մասին, որ կլինեն ժամանակներ, երբ քեզ կուզենան ճնշել, որ դու չկատարես քո կամքը, բայց միշտ պայքարիր, և դու կհասնես քո նպատակին:

Ինձ թվում էր, թե բոլորը համակերպվել են իրողության հետ, բայց մի օր նկատեցի, որ պապս փողոցում ցերեկով խոսում է մի օտար կնոջ հետ. դա մեր հասարակության մեջ անթույլատրելի է: Ես հասկացա, որ դա այն կինն է, ով ընտրում է փեսացուներ աղջիկների համար:

Երբ պապս այդ կնոջ հետ եկավ տուն, մայրս ինձ ասաց, որ ես պետք է հյուրասիրեմ նրան: Ես որոշեցի, որ պետք է դիտավորյալ թեյը նրա վրա լցնեմ. ստացվեց, նա այնպես բղավեց և ասաց, որ ես չարիք եմ, և ոչ մեկը չի ցանկանա ինձ հետ ամուսնանալ: Ծնողներս չգիտեին ինչպես վարվել ինձ հետ: Որոշ ժամանակ

անց պապս մեր տուն հրավիրեց բուրդայական մի վանականի: Ես լավ հասկանում էի, որ ինձ ուզում են ուղարկել բուրդաների վանական համալիր:

Վանականը ինձ հարցրեց, թե իրոք ես չեմ ուզում ամուսնանալ:

-Ո՛չ, տեր, չեմ ուզում:
-Բայց կանայք պետք է ամուսնանան, ունենան տղա երեխաներ և երջանիկ ապրեն իրեց ամուսինների հետ:
-Ո՛չ, ես դա չեմ երազում, ես ուրիշ երազանք ունեմ:
-Ինչո՞վ ես ուզում զբաղվել, երբ մեծանաս:
- Ես ուզում եմ դառնալ ուսուցիչ և ծառայել մարդկանց:

-Ուսուցիչ՞,- զարմացած հարցրեց վանականը,- իսկ ի՞նչ կկարողանաս սովորեցնել:

-Ես ուզում եմ մարդկանց սովորեցնել մարտարվեստ:
-Մարտարվե՞ստ:
-Այո, տեր, ես կլինեմ առաջին կինը, ով կսովորեցնի մարտարվեստ:

Նա ուրիշների նման չծիծաղեց ինձ վրա, այլ ժպտաց և ասաց. «Նայի՛ր իմ աչքերին: Բայց մենք իրավունք չունենինք նայել տղամարդկանց, առավել ևս վանականի աչքերին, և ես մտածեցի, թե նա խելքը թռցրել է, կամ ինչ-որ բայն այն չէ: Նա ձեռքով բարձրացրեց իմ գլուխը և նայեց իմ աչքերի մեջ: Որոշ ժամանակ անց նա որոշեց, որ ինքը կօգնի և կսովորեցնի աղջկան: Ես չէի հավատում իմ տեսածին և լսածին. առաջին անգամ ինձ լսեցին և համաձայնեցին իմ կարծիքի հետ: Այդ անակնկալը իմ մեջ շատ բան փոխեց: Ինձ թվում էր, թե ելք չկա, և ամեն ինչ քեզ հակառակ է, բայց համոզվեցի, որ չի կարելի հանձնվել, պետք է պահպանես քո երազանքը: Ես հասկացա ևս մի ճշմարտություն, որ օգնում է դժվար ժամանակներում. «Կարիք չկա, որ դա դուր գա բոլորին»...

Ինչպե՞ս կարող եմ համարում/ Գրողի անունը՝ Թանգուլ Կին Թարգանված է «Գնա՛ այն ճանապարհով, որը որ դժվար է» գրքից:

ՄՈՐ ԶԵՌՔԵՐԸ

Ժանը վիճակում լինեմք, նա փորձում է ամեն ինչ անել մեզ համար, ամեն ինչ հասցնել, որ ոչ ոքից հետ չմնանք:

Ես միշտ կարծել եմ, թե ամենալավ բանը հարուստ լինելն է: Սակայն երբ մեծացա, հասկացա, որ ամենալավ բանը ոչ թե հարուստ լինելն ու ամեն բան ունենալն է, այլ՝ կողքին ծնող ունենալը, ծնողին սիրելն է ու հարգելը: Ամենալավ, ամենաանգին բանը մոր ձեռքերն են՝ երբեմն չխնամված, թեկուզ կոշտացած ու հոգնած, բայց քնքուշ ու բարի ձեռքերը: Մոր ձեռքերն են մեզ պահում, շոյում, դժվար պահին ամուր գրկում և մոռացնել տալիս տխրությունը:

Թորոյան Դիաննա

5-րդ դասարան

Արտանիշի միջնակարգ դպրոց

ԵՍ ԲԱՐԿԱՆՈՒՄ ԵՄ, ԵՐԲ...

Մենք՝ երեխաներս, ամեն օր հանդիպում ենք անարդարությունների: Ես մտնում եմ խանութ և տեսնում, որ մեծ հերթ է գոյացել: Եվ նկատում եմ, որ որոշ մարդիկ փորձում են խախտել հերթը, դա ինձ շատ է բարկացնում:

Շատ հաճախ փողոցում նկատում եմ մարդկանց, ովքեր ծխախոտի մնացորդը զցում են գետնին, մինչդեռ քիչ հեռվում աղբաման կա դրված: Շատ երեխաներ պաղպաղակի կամ կոնֆետի թղթերը նույնպես չեն զցում աղբամանը: Դա ինձ ևս բարկացնում է:

Համացանցում նկատում եմ լատինատառ գրություններ և մի շարք ուղղագրական սխալներ: Շատ ազդեր չունեն իրեց գիրը, իսկ մենք ունենք, սակայն ըստ արժանվույն չենք գնահատում:



Հունանյան Անի, VII դ դասարանի աշակերտուհի Սևանի N4 հիմնական դպրոց

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀՈՒՇ-ՑԵՐԵԿՈՒՅԹ

Գավառի Մ. Բունիաթյանի անվան N8 միջնակարգ դպրոցի չորրորդ դասարանում փետրվարի 25-ին տեղի ունեցավ հայ մեծանուն վբանաստեղծ Հովհաննես Թումանյանին նվիրված հուշ-ցերեկույթ: Այնտեղ թեւածում էր Թումանյանի իմաստուն ոգին և իրական կյանքից կտրում մեզ: Չորրորդ դասարանում արևի ոսկեթել շողերին էին խառնվել աշակերտների ծով աչքերի փայլը ու հպարտությունը: Նրանք ապրեցին, արտասանեցին, ներկայացրեցին և կյանքի կոչեցին...

Նրանց երգի ելևէջներով, պարի շարժումներով, քնավոր խոսքերի իմաստալից մտքերով կտրեցին մեր հայացքը հողից և բարձրացրին վեր՝ դեպի երկինք, դեպի անհուն հավերժություն...

Հանդիսատեսին այդ խոսքերը մտքով տարան դեպի Լոռվա չքնաղ բնությունը, որտեղից էլ լսելի դարձրին Թումանյանի երգերը, որի միջոցով փոխանցվեցին նրա շունչն ու ոգին: Երգի հնչյունները, օդի հետ միախառնվելով, շոյեցին մեր սրտերը, տարան մանկություն, հասանք Թիֆլիս, կինոտոների հետ պար բռնեցինք, Գիբորին մեծ մարդ դարձած քաղաքից գյուղ բերեցինք, ազգայինը վեր դասեցինք, ծաղիկներին շունչ տվեցինք ու նրանց բույրից մենք արբեցինք:

Հորովելն էլ մենք երգեցինք, ու նորից մենք թումանյանական թևեր առած, խոսքեր կերտած, երգեր երգած, շունչն ու հոգին մեր մեջ պահած դեպի երկինք կապվաճենք, Թումանյանին էլ ավելի կնեծարենք, նրա թողածն էլ ավելի թանկ ու անգին մենք կպահենք...

Գավառի թիվ 8 միջնակարգ դպրոց



Ուտա Թադևոսյան Գավառի N2 մ/դ



Վարդգես Հովեյան Երանոսի N1 մ/դ

4

«ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղարքունիք գյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ
Հասցե՝ Գարեգին Նժդեհի փ. 1
Փոստային դասիչ՝ 1207
Թողարկման օրը՝ 27. 03. 2022 թ.

Խմբագիր և համարի պատասխանատու՝ Ռոզա Հակոբյան
Տպարանակը՝ 1000
Հեռախոս՝ 093919658:
Էլ. փոստ՝ roza.hakobyan.1975@mail.ru
Կայք էջ՝ 1tu1.hak , 1u1.am